# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2023 թվականի N 553Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ « ԱԼՎԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՐԴԵՆԻՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՂՎՈՐԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 530-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010

թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ալվարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի N 3 նիստի արձանագրությունը, Արկադի Ավանեսովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ալվարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արդենիսի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղվորիկի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ալվարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Արկադի Ավանեսովի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ալվարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Հասմիկ Պոտոսյանին՝ մինչև խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտը:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի հոկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ալվարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արդենիսի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղվորիկի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի անվանական կազմը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 8-ի N192-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 9-ի N197-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հուլիսի 13-ի N292-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 530-Ա որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում «Արկադի Ավանեսով» բառերը փոխարինել «Հասմիկ Պոտոսյան» բառերով:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է